

## ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1915-1917 ԹԹ. \*

Վավերագրեր Երզնկայի և Բաբերդի հայության  
1916-1917թթ. վիճակի մասին

1916 թվականին ռուսական բանակի և հայ կամավորականների արձանագրած հաջողությունները՝ Արևմտյան Հայաստանում, հնարավորություն տվեցին Անդրկովկասի ու Ռուսաստանի հայ բարեգործական ու հասարակական կազմակերպություններին, հայ ազգային կուսակցություններին ու Հայ առաքելական եկեղեցու թեմերին՝ նախաձեռնել ցեղասպանությունից փրկված արևմտահայության բեկորներին օգնելու գործը:

Արևմտյան Հայաստանում սկսեցին գործել հայկական տարբեր կազմակերպություններ՝ Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությունը, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, ինչպես նաև Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքը, Մոսկվայի Հայկական կոմիտեն, Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլանայի կոմիտեն, ամերիկյան և մասամբ բրիտանական բարեգործական կազմակերպությունները: Վերջիններիս հետ սերտ համագործակցության ճանապարհով հայ ազգային կուսակցությունները և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցությունը փորձում էին ապահովել անհրաժեշտ նյութական միջոցներ՝ Եղեռնից փրկված արևմտահայության զոյատևման և Արևմտյան Հայաստանի վերաշինության գործը կայուն հիմքերի վրա դնելու համար:

Սակայն այս կազմակերպությունների ու կուսակցությունների հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր Ալաշկերտի հովտի, Վանի նահանգի, մասամբ Մուշի և Էրզրումի հայությանը ցույց տրվող օգնության վրա: Մինչդեռ Արևմտյան Հայաստանում կային բնակավայրեր, որոնք այս կամ այն պատճառով դուրս էին մնացել բարեգործական կազմակերպությունների ուշադրությունից: Նման վայրերից էին Երզնկան և Բաբերդը: Այս երկու քաղաքների հայ բնակչությունը զգա-

\* Արևմտյան Հայաստանի մի մասում 1915-1917թթ. շարունակվում էին մարտերը, մինչդեռ մյուս հատվածներում արդեն ծավալվում էին հայրենիքի վերաշինության աշխատանքները: Ներկայումս՝ Արցախյան պատերազմի ավարտից անգամ 1,5 տասնամյակ անց մենք չենք տեսնում այն ոգևորությունն ու անսահման նվիրումը, որը բնորոշ էր Արևմտյան Հայաստանի վերաշինության գործի առաջին ռաիվիրաներին: Ներկա սերնդին այդ փաստը հիշեցնելու համար, «Վեմ»-ը պարբերաբար տպագրելու է Արևմտյան Հայաստանի զավառների վերաշինության առաջին քայլերի մասին պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սահակյանի հայտնաբերած արժեքավոր վավերագրերը: **ԽՆԹ.**

լիորեն տուժել էր երիտթուրքական իշխանությունների իրականացրած Հայոց ցեղասպանությունից: Ռուսական զորքերի կողմից նշված բնակավայրերի գրավումը հնարավորություն է ստեղծում տարբեր վայրերում, հատկապես Դերսիմում ապաստանած հայերին աստիճանաբար վերադառնալ հայրենի օջախը:

Այս շրջանում Արևմտյան Հայաստանի ազատագրված վայրերն էին մեկնում հայ ազգային կուսակցությունների գործիչներն ու մտավորականության լավագույն ներկայացուցիչները, օգնության, որբերի և քրդերի մոտ գտնվող հայերի փրկության գործը տեղում կազմակերպելու համար: Նրանց թվում էին Ռուստոմը, Կարո Մասունին, Վահան Փափագյանը, Մուշեղ Թումանյանը, Աշոտ Աթանասյանը և ուրիշներ: Իսկ Երզնկայի և Բաբերդի շրջանում իրենց հայրենասիրական պարտքն էին կատարում նշանավոր հայրուկապետեր Մուրատը (Մուրատ Խրիմյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Մեպուհը (Արշակ Ներսիսյան): 1916 թ. նոյեմբերի 18-ին նրանք դիմում են Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության նախագահ Ավ. Սահակյանին, ներկայացնում են Բաբերդում և Երզնկայում ստեղծված իրավիճակը, խնդրում են աջակցել վերադարձողներին և օգնել՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար:

Ներկայացվող փաստաթղթերից հետաքրքրական է նաև Թիֆլիսում կազմված «Երզնկացիների միության» վարչության նախագահի դիմումը, ուր ոչ միայն անդրադարձ կա իր հարազատ քաղաքի աղետալի վիճակին, այլև փաստական տվյալներ են հաղորդվում մինչև ջարդերը և տեղահանությունը հայ բնակչության թվաքանակի, ունեցած գույքի՝ դպրոցների, վանքերի, եկեղեցիների, խանութների, արհեստանոցների և այլ շինությունների մասին:

Վարչության նախագահը ներկայացնում էր վեց առաջարկ, որոնք, նրա կարծիքով, հնարավորություն կտային օժանդակել երզնկացիների վերադարձին և բնականոն կյանքի հաստատմանը:

Արդյունքում՝ 1917 թ. փետրվարին Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքը զգալի քանակությամբ այլուր է ուղարկում Երզնկա, որի շնորհիվ տեղի գաղթականությունը փրկվում է սովից:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում, տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով ու ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները արվել են ուղղաձիգ փակագծերով: Փաստաթղթերի վերնագրումը կատարվել է մեր կողմից:

*Ռուբեն Օ. Սահակյան  
պատմ. գիտ. թեկնածու*

## Summary

### THE PROBLEM OF RECONSTRUCTION OF WESTERN ARMENIA IN 1915-1917

The documents about the state of the Armenians (1916-1917 of Erznka and Baberd

*Ruben O. Sahakyan*

**N 1  
ԴԻՄՈՒՄ-ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹԻՖԼԻՍԻ ԳԱՅՈՑ  
ԳՅՈՐԱՆՏՆԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ ԱՎ. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ  
ԵՐԶՆԿԱՅԻ ԵՎ ԲԱԲԵՐԴԻ ԳԱՅՈՒԹՅԱՆ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳԱՅՏՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ**

18 նոյեմբերի 1916 թ.  
Երզնկա

Երզնկայի<sup>1</sup> և Բաբերդի<sup>2</sup> գաղթականական վիճակը և սուր կարիքների անյետաձգելի պահանջը ստիպեց մեզ կանչել Սեպուհին<sup>3</sup> և Բաբերդից՝ միասին խորհրդակցիլ և տեղեկագրել Ձեզ իրաց վիճակը և ցույց տալ պահանջները. ներփակ ուղարկում ենք յիշեալ տեղեկագիրը, խնդրելով, որ լուրջ նկատողութեան առնելք և հասնիք օգնութեան Ձեր տրամադրութեան տակ եղած միջոցներով. շատ անգամներ այս շրջանների համար դիմումներ եղան, աղաղակներ բարձրացան, բայց մինչև այժմ եղած օգնութիւնները անբաւարար են: Ուստի մենք վերջին անգամն ըլլալով կոչ ենք անում Ձեզ յուսալով, որ կանէք ինչ որ անելու է՝ փրկելու համար գանձազան վայրերից հասած հայութեան բեկորներին:

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

Շարունակուել է Խարբերդի, Շնշկածագի շրջաններից գաղթականների կարաւանը, գրեթէ ամեն շաբթու 40-ով 60-ով հասնում են բոլորովին մերկ, առ առաւելն ցնցոտիներով ծածկուած, տառապանքից հիւժած ու մաշած ֆիզիքապէս, այնպէս որ առաջին մտածումնը լինում է հագուեցնել դրանց, մինչդէռ մինչև այսօր ոչ մի շոր չէ հասած այստեղ, ու միմիայն Մոսկվայի<sup>4</sup> Կոմիտեղ իր սուղ միջոցներով ջանացած է, այնպէս որ հասածներին՝ մօտաւորապէս 1500 անձերի մեծ մասը մնում է առանց շորի, միւս կողմից յարմար տեսնուած լինելով գաղթականներին տեղափոխել Երզրումի շրջանը՝ աշման այս ցուրտ շրջանին առաւել ևս զգացուել է տաք շորի և ատիալի

<sup>1</sup> Երզնկա (Երեզ, Երիգա, Երզնջան, Արզնկա և այլն), քաղաք Արևմտյան Գայաստանում, Եփրատ գետի ափին, Եկեղյաց գավառում: Գանդիսացել է Երզրումի վիլայեթի Երզնկա գավառի վարչական կենտրոնը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երզնկայի բնակչության թվաքանակը 40 հազար էր, որից 15 հազարը հայեր: Գայերն ունեցել են 3 գրադարան, 4 ընթերցասրահ, 1 ինքնագործ քատրոն 25 դերասաններով, 3 դեղատուն, 2500 աշակերտ և 100 ուսուցիչ-ուսուցչուհի: 1909-1911 թթ. լույս են տեսել «Արդի» շաբաթաթերթը, իսկ 1910-1911 թթ.՝ «Արոր» ամսագիրը: Երզնկա քաղաքից ու նրա գավառից 1915 թ. ցեղասպանության ժամանակ զոհվում է 25500 հայ: Նրանց ճնշող մեծամասնությունը զազանաբար սպանվում է Կանայի կիրճում:

<sup>2</sup> Բաբերդ (Բայբերդ, Բայբուրթ), քաղաք Մեծ Գայքի Սպեր գավառում, Եորդիս գետի մասի ափին, Կարինից 121 կմ հյուսիս-արևմուտք: Մինչև 1915 թ. Բաբերդի գավառում կար 30 հայկական գյուղ: Քաղաքն ունեցել է 30 հազար բնակչություն, որից 10 հազարը հայ:

<sup>3</sup> Սեպուհ (Ներսիսյան Արշակ, 1872-1940)—ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայրուկապետ, ԶԳԴ անդամ: Մասնակցել է 1904թ. Սասունի ապստամբությանը. կամավորական շարժմանը (1914-1916), Մարդարապատի ճակատամարտին և Բաքվի հերոսամարտին (1918): 1919 թ. ընտրվել է Գայաստանի առաջին Գանրապետության խորհրդարանի անդամ: Գործուն դեր է ունեցել 1920 թ. Մայիսյան խռովության ճնշման մեջ:

<sup>4</sup> Սեբաստացի Մուրատ (Նրիմյան Մուրատ, (1874-1918)—ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայրուկապետ, ԶԳԴ անդամ: Մասնակցել է 1904թ. Սասունի ապստամբությանը: 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Ձանգեզուրում կազմակերպել է հայերի ինքնապաշտպանությունը: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո եկել է Տարոն, ապա՝ Սեբաստիա: 1915 թ. խմբով ապաստանել է լեռներում, ապա հասել է Սամսուն, որից հետո Բաթում: Ռուսների կողմից Երզնկան գրավելուց հետո, ծեռնարկել Սեպուհի, Կայծակ Առաքելի հետ հայ բնակչության փրկության գործը: Ձուկվել է Բաքվի 1918թ. հերոսամարտի ժամանակ:

<sup>5</sup> Կայծակ Առաքել (Աբաջյան Տիգրան, 1869-1917)—ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայրուկապետ, ԶԳԴ անդամ: Մասնակցել է 1904թ. Սասունի ապստամբությանը: 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների օրերին գործել է Երևանում: Մասնակցել է 1905-1911թթ Իրանական հեղափոխությանը: 1915 թ. Վանի հերոսամարտի ժամանակ եղել է Այգեստանի Ձիվկորական մարմնի անդամ: 1916-1917 թթ. Երզնկայում զբաղվել է հայ գաղթականների օգնության և թուրքերի մոտ բռնի պահվող հայ երեխաների, կանանց և աղջիկների փրկության գործով:

<sup>6</sup> Մոսկվայի Գայկական կոմիտեն հիմնվել է 1914 թ. հոկտեմբերի 26-ին Մոսկվայում: Կոմիտեի անդամներն էին՝ Ս. Սամիկոնյանը (ճախագահ), Կ. Կուսիկյանը, Ա. Օատուրյանը, Ա. Ջիվելեզովը և ուրիշներ: Կից գործել է Կանանց կոմիտեն, որի անդամներն էին մոսկվաբնակ հայուհիները: Դեկտեմբերի 20-ին հաստատվել է Մոսկվայի Գայկական կոմիտեի կամոնադրությունը: Կոմիտեն նպաստել է ունեցել օգնել վիրավոր զինվորներին, հայ կանավորներին և գաղթականներին: 1915 թ. հուլիսի 10-ից կոմիտեն ընդգրկվել է Ռուսաստանի Կարմիր խաչի մեջ: Մարտին Գայկական կոմիտեն կազմակերպել է բժշկասանիտարական երկու ջոկատ և ուղարկել Երևանի մահամզ, ապա մասն Արևմտյան Գայաստան: Բացել է սննդակայաններ, հիվանդանոցներ, բուժարաններ և որբանոցներ: 1916 թ. հիմնադրել է «Армянский вестник» շաբաթաթերթը: Տե՛ս Արутյան Ա., Деятельность Московского Армянского комитета в годы Первой мировой войны, «Բաբերդ Գայաստանի արխիվների», նո. 1, 2008, էջ 253-257:

[ծածկոց] պակասը՝ հարկաւոր է տրամադրութեան տակ ունենալ տաք շորեր, առնուազն 1500 ձեռք ճերմակեղէն, 1500 ձեռք վերնագգեստ, 1500 գոյգ կօշիկ և 1000 գլխի ծածկոց, հասածները հագուեցնելու և հասնելիքներին տրամադրելի շորեղէն լինելու համար և այս կարգադրութիւն լինելու է անմիջապէս, իսկ եթէ պատրաստ շոր է ճարել շատ թէ քիչ, թէ քանկ գնով (կտաւ՝ 1-5 ռ[ուբլի] արշինը, շորեղէններ՝ 80 կ[ոպեկ]-1 ռ[ուբլի]) միայն կօշիկ չի ճարուում:

Նկատի ունենալով, որ Բաբերդի շրջանում հաւաքուած գաղթականների թիւը 500-ի հասնում և աճում է օրըստօր՝ սոյն համեմատութեամբ հասցնել նաև շորեղէններ և կամ համապատասխան գումար Բաբերդի համար:

Սնունդ — Երզնկայ հասած գաղթականների մեծ մասը կարօտ է սնունդի, գրկուած լինելով ամեն միջոցներից և մանաւանդ նկատի առնելով նրանց ֆիզիքական հալ ու մաշ վիճակը՝ հարկաւոր է սնունդի մասին մտածել հասնելով բոլորովին թալանուած վիճակի մէջ, և աշխատանք չլինելուն համար՝ Մոսկվայի) Կօմիտեոը 1000-ից աւելի կարօտներից միայն 250 անձի տալիս է հաց և կերակուր, իսկ միւսները ստանում են միմիայն հաց: Չաքը ստացում է տեղական փուռերից փութը 5 ռուբլիով, բայց եթէ մի օր փռապանները սպառեն իրանց ցորենը և այլևս չկարողանան հաց հայթայթել՝ պիտի գտնուինք մեծ անձկութեան մը առջև, ուստի հարկաւոր է պապհովել պարէնը գէթ մինչև Մայիս ամիսը հասնելու համար: Եւ որովհետև մի կողմից տեղափոխուում են այլուր, իսկ միւս կողմից նորեր հասնում են՝ ընդունելով մնացողների միջին թիւը 1000՝ հարկաւոր է այժմէն համբարել հացի համար 10000 փ[ուբ] ցորեն, 200 տաւար, բրավիզիա (լոբի 300 փ[ուբ], սիսեռ 200 փ[ուբ], բրինձ 150 փ[ուբ], իւղ 100 փ[ուբ]): Ու եթէ այս քանակը հնարաւոր չի լինիր անմիջապէս Կովկասից տեղափոխել՝ հնարաւոր է մասամբ տեղոյն վրայ ճարել առաւել կամ նուազ գնով, եթէ փող հասցուի: Ցորենի փութը 7 ռ[ուբլի], տաւարը 30-40 ռ[ուբլի], բրավիզիայի [պարեն] համար 10000 ռ[ուբլի] հաշուելով հարկաւոր է հինգ անսուան մթերք հայթայթելու համար (70000+8000+10000) 88000 ռուբլի, իսկ Բաբերդի համար համեմատական չափով մթերք կամ 44000 ռ[ուբլի]:

Ցանքս — Նկատելով, որ Երզնկայի հողը բերրի է և մեկը 14-16 կարող է արդիւնք տալ, անհրաժեշտ է ապագայի համար ցանքսի մասին մտածել: Կլիման և հողը թոյլ է տալիս գարնանացանքս անել այստեղ, այդ դեպքում ոչ միայն մտածելու է ներկայ գաղթականների ապագայ հացը, այլև յառաջիկային նոր գրաուելիք վայրերից հասնելիք գաղթականների սնունդը: Դրա համար հարկաւոր է ապահովել հացի բերք, աշ-

նանցանքսը անցնում է, ուստի գարնանացանքսի համար տրամադրելի ունենալու է (որովհետև ատենին սպասելու և յապաղելու օրինակներ շատ ունինք առջևնիս) այժմ իսկ գէթ 6000 փ[ուբ] ցորեն և 1000 փ[ուբ] գարի: Եւ դա անպայման փոխադրուելու է Կովկասից, որովհետև ներկայիս գարնանացանքսի համար արմտիք չէ կարելի գտնել այստեղ: Իսկ ցանքսի համար գործիքների մասին մտածելու կարիք չկայ, որովհետև տեղական գործիքներով կարելի է մշակումը ի գլուխ հանել, միայն կայ լծկանի հարց: Լծկանը եթէ Կովկասից դժուար լինի ճարել՝ այստեղ գոյգը 120-150 ռուբլիով կարելի կը լինի 100-150 գոյգ ճարել, և այստեղ հնար եղած չափով կարելի է կազմակերպել: Մոսկվայի) կոմիտեոը թէև մօտ 800 փ[ուբ] աշնանացանքս արած է, բայց դա ծով կարիքի դիմաց շատ չնչին տոկոս է: Եթէ ուզում ենք, որ ժողովուրդը գարնան քաղցից չը կտորուրի և նոր հասանելիք գաղթականների գէթ մի պատառ հաց կարելի լինի տալ՝ ապահուելու է անպայման գարնանացանքսը: Բաբերդի համար էլ նոյն բանը կարող ենք ասել. սահմանից ու դիրքից հեռի և արտերն հերկուած լինելով՝ ամեն կերպ հարմարութիւն կայ մշակոյթի. հետևաբար 5000 փ[ուբ] սերմնացու էլ Բաբերդի համար անհրաժեշտ է, իսկ լծկաններ՝ 100 գոյգ:

Թուրքերի Սօտ Պահուած Երեխաների հարց — Թէ Երզնկայի և թէ Բաբերդի գրաւումից՝ անցել է 5-6 ամիս, տակաւին թուրքերի տուններից դուրս են գալիս հայ երախաներ և աղջիկներ, իսկ դեռ թագնուածների թիւն էլ չնչին տոկոս չի կազմում, շատերի տեղերը իմանում ենք, բայց շնորհիւ տիրող կառավարութեան անբարեհաճ ընթացքին՝ հնարաւոր չի լինում զանոնք ազատել: Դէպքեր կան, որոնց առթիւ կառավարութեան բռնած ընթացքը բոլորովին յուսահատեցուցիչ է, չբաւեր հայ մը գտնուելու դէպքում միայն իմացնել կառավարութեան, վերցնելու համար իր օժանդակութիւնը ստանալու, այլ պահանջում են վկաներ հայութիւնը հաստատելու, նոյնիսկ այդ առթիւ թարգմանչի դերը չեն ուզում տալ հայուն: Ինչպէս ստեպ պատահում է՝ գտնուած երախան կամ չափահաս աղջիկը առաջին օրը թագցնում է իր հայ լինելը, ու մի երկու օրուան ընթացքում հագիւ ընտելանալով յայտնում է իր հայ լինելը, հետևաբար կառավարութիւնը գտնուած հայի մը համար մի քանի օր միջոց տալու է, թող[նել]ով մեր տրամադրութեան տակ: Այս մասին խնդրում ենք, որ հարկ եղած տեղերը դիմելով դարմանը ձեռք բերէք:

Մուրատ, Կայծակ Առաքել, Սէպուհ, Մօսկուայի Չայկական] կօմիտետի լիազօր, բժ[իշկ] Ա. Պօղոսեան [ստորագրութիւններ]

ՅԱԱ, Ֆ. 654, ց. 4, ք. 14-15: Բնագիր: Ձեռագիր:

<sup>7</sup> Երզնկան ուսական զորքերի կողմից գրավվել է 1916 թ. հուլիսի 12-ին, իսկ Բաբերդը՝ հուլիսի 30-ին:

**ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ԶԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱԶԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՎ. ՍԱԶԱԿՅԱՆԻՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԶԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՍՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան**

Հայ ժողովրդին հասած զուլուճը ոչ միայն տաճկահայ գաւառամասի մէջ այնքան սոսկալիօրէն տեղի չէ ունիցիլ զուցէ, որքան Երզնկայի մէջ: Կրթական-հասարակական հիմնարկութիւններով հարուստ, ազատագրական շարժումի մէջ բաց ճակատով մարտնչող, կուլտուրական և քաղաքակրթական բարձր զաղափարով օժտուած Երզնկան և Երզնկացին այսօր կիսով չափ աչքաթող իղած հայ կազմակերպութիւնների անմիջական հոգատարութիւնից, լուռ, անկարող մուրալու, ձեռք կարկառիլու և կամ հոգատար կազմակերպութիւնների դուռը բաշխիլու, տքնուճ է քաղցի, մերկութեան և հիւանդութեան ճիրաններում:

Պահ մի թում էր, թէ հրեշտակ ջնջումից հրաշքով ազատածների թիւը Դերսիմի սարերի և կամ անդր Դերսիմի վայրերում յուսատու թիւ պիտի կազմէ ապագայ օջախի հիմքը դնիլու համար, սակայն այդ յոյսն էլ իղերև ելաւ:

Մի խղճուկ մնացորդ միայն էն չէն, էն տասնիակ հազար հայութիւն ունիցող Երզնկայից ու նրա հայաշատ գիւղերից:

Թէ ինչ պատկեր է ներկայացնում այսօրւայ Երզնկան իր ժողովրդով, կարող է ցոյց տալ այն վիճակագիր-տեղեկագիրը, որ Ձեզ ներկայացնելու պատիվ ունինք և որ զուրած է հարազատ ու անպաճոյճ:

Նորակազմ «Երզնկացիներու Միութիւն»-ը, որի նպատակն է կարելոյն չափ օգնութեան զալ իր աւեր հայրենիքին և հայրենակիցներին, խնդրում է Ձեզ Ձեր բարեհաճ վերաբերմունքը, աջակցութիւնը կազմակերպելու օգնութեան և վերաշինութեան գործը լուրջ ու առողջ հիմքերի վրայ:

Յարգանք՝ ի դիմաց Վարչութեան Նախագահ՝ Սիանճեան [ստորագրութիւն] Քարտուղար Ազատ Մանուկեան [ստորագրութիւն] [կնիք. «Երզնկացիներու Միութիւն. Թիֆլիս-1916»]

ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, ք. 16-17: Բնագիր: Ձեռագիր:

Երզնկայի գրաւուճն անմիջապէս վերջ հոն հաստատուած Մոսկվայի Հայկական Կոմիտէի հաշվոյն ծառայող՝ մեր հայրենակցէն ստացուած տեղեկագրին վրայ մեր կողմէն աւելցնելով քանի մը կարեւոր ծանոթութիւններ, Ձեզ կը ներկայացնենք յետագայ պատկերը, այն քաղցր յուսով, որ շատերու կարգին մեր քանդ ու աւեր հայրենիքի վերաշինման և նրա մնացորդ թշուառ ժողովրդի վիճակին մասին ևս բարի պիտի լինէք խորհելու իր կարգին:

Բուն քաղաքի և դաշտի մէջ գտնուող 31 հարաբանակ գիւղերու 15000-ի մօտ բնակչութենէն եւ մեծաւ մասամբ սահմանակից Տերսիմէն (Տաւրոս) ազատուած են վերադարձած են քաղաքացիներ՝ թուով 100-150, իսկ գիւղացիներէն թուով 500-600 հոգի: Գլխաւորաբար ազատուած են Ագրակ և Կեզլիճէ անուն գիւղերու բնակիչները, թերևս այն միակ պատճառաւ, որ յիշեալ գիւղեր աւելի մօտիկ են վերոյիշեալ լեռնաշղթայէն, իսկ մնացեալ 29 գիւղի բնակիչներէն կարծես մտնչի համար ազատուած են մէկ մէկ հոգի:

Մի կերպ ազատուած են քաղաք հասածները կը ներկայացնեն շատ խղճալի երեսնոյթ մը: Մերկ են բառին բովանդակ առումովը և քաղցած ու հալուճաշ վիճակի մէջ: Մերկ են՝ վասն զի տեղահանութեան առաջին օրն իսկ թիւրք ժանդարմները մերկացուցած են բոլոր անոնք, որոնց վիճակուած է այդ կեանքը, իսկ Տերսիմի մէջ ապաստանածներն այլ մօտ մէկ ու կէս տարուան տարագիր կեանքին մէջ մաշեցուցած են ինչ որ ունեէին իբր զգեստ: Անօթի են և հալուճաշ վիճակի մէջ, վասն զի Տերսիմը, թէև հարուստ բնական շատ մ'առաւելութիւններով, բայց միշտ եղած է հացակարօտ, որովհետև քիւրդը, ինչպէս ամեն տեղ, այս երկրէն մէջ այլ չներկայանար իբր հողագործ: Իր միակ զբաղումն է դուրաբաբուութիւն, ուրկէ ձեռք բերած արդիւնքը հազիւ կը բաւէ իր շատ ժուժկալ եւ սակաւապետ կենսաքին, հետևաբար իրեն համար անկարելի է սնուցանել եկուորներ: Ստացուած հաւաստի տեղեկութեանց համաձայն այդ թշուառներու առաջին խնամքը տարած է և կը տանի տակաւին, միայն Մոսկուայի Հայկական Կոմիտէտը իր պայմանների ներած չափով, պայմաններ, որոնք բնականաբար չպիտի կարենային բաւարարել ներկայացած բազմակողմանի պահանջները:

Դժբաղդներէն բաւական թուով ց'արդ փոխադրուած են Կարին, ուր համեմատած Երզնկայի հետ, կան մէկէ աւելի զաղթականական մարմիններ, որոնց ջանքերը եւս հեռու են բաւարար արդիւնք մը տալէ:

Բուն քաղաքը բաժնուած է երկու մասի: Արևելեան մասին մէջ հաստատուած են թիւրքե-

րը, իսկ արևմտեան մասին մեջ հայերը թուով 1500 տուն: Հայերու բաժինը մեծաւ մասամբ քանդուած է, շատ թաղեր գետնին հաւասարած են, միայն ազատուած են այն շէնքերը (անհատական և ազգապատկան), որոնք հայերու տեղահանութենէն վերջ գրաւուած են թիւրքերու կողմէ ծառայեցնելու համար այս կամ այն հասարակական պէտքին և կամ յատկացուած են թիւրք եկուորներու բնակչութեան: Այս երկու բաժանմունքի ճիշտ մէջտեղը հաստատուած է շուկա, որը այժմ ւաւերակի վերածուած է 80 տոկոսով: Հայերու տները անցելոյն մէջ քանդուած են թիւրքերու կողմէ օգտուելու համար փայտերէն, իսկ ներկային անոնց պակասը կը լրացնեն ռուս զինուորներ: Թիւրք տներու ձեռք դայցնող չկայ, երեւոյթ մը, որ դժբաղդաբար յատուկ չէ միայն երզնկային: Միութեանս նախագահը քանի մ' օր առաջ վերադարձած լինելով Կարինէն, կը հաւաստէ տեսած լինել այդ ցաւալի և կործանարար իրականութիւնը նաև հոն:

Երզնկան ունի հետևեալ ազգային հաստատութիւնները:

**Եկեղեցիներ`** Ա. Փրկիչ, Ա. Նշան, Ա. Երրորդութիւն, Ա. Սարգիս և մատուռ մը Ա. Աստուածածին: **Վարժարաններ`** Ընկերական, Եզնիկեան, Կեդրոնական, Արամեան և Քրիստիանեան աղջկաց միակ վարժարանը, իր կողքին ունենալով համաձայն Մանկապարտէզը օժտուած ֆրէսկոյէն վերջին կատարելագործուած մեթոդով:

**Ազգապատկան բաղնիքը** 1907-1908 թուականին շինուած:

**Տներ և խանութներ:** Ի բացառեալ շուկայի այլ և այլ մասերում գտնուած խանութներ և մակազէններ, վերոյիշեալ եկեղեցիներէն Ա. Նշանը և Ա. Երրորդութիւնը իրենց շրջապատում ունին՝ առաջինը վեց մեծ տներ, իսկ երկրորդը՝ 22-25 տներ, որոնց տարեկան վարձքը կ'ապահովէր թէ եկեղեցին և թէ յարակից վարժարանին տարեկան ծախուց մի մասը:

Եկեղեցիներէն Ա. Փրկիչը հայերու տեղահանութենէն անմիջապէս վերջը թիւրքերու կողմէ ուժանակներով քանդուած է: Ա. Նշան և Ա. Երրորդութիւն եկեղեցիները, ինչպէս նաեւ Ա. Սարգիսը թալանուած են, «Ա. Աստուածածին մատուռը ևս արժանազատ է Ա. Փրկիչի վիճակին: Անվնաս մնացած երկու եկեղեցիները փակ են, իսկ Ա. Սարգիս եկեղեցին Մոսկուայի Հայկական Կոմիտէի շնորհիւ վերանորոգուած է, սոյն կոմիտէտը վարձած է քահանայ մը, որ եկեղեցական պաշտամունք կատարելէ զատ պաշտօն ունի հոգևոր միխթարութիւն ջանքելու, արդարև միխթարութեան կարօտ բազմաչարչար եւ նահատակ ազգի մնացեալ բեկորներուն:

Վարժարանները կը մնան քիչ թէ շատ անվնաս, բայց զուրկ դռներէ և պատուհաններու ապակափեղկերէ, անվնաս եղածները յատկացուցած են գաղթականներու և զանոնք հոգացող մարմիններու բնակութեան:

Թիւրքական չարաշուք սահմանադրութեան<sup>8</sup> հռչակումէն մէկ տարի առաջ ձեռնարկուած էր բաղնիքի մը շինութեան և սահմանադրութեան տարին լրացուած (1907-1908): Քաղաքին մեջ գտնուած վեց բաղնիքները շինուած լինելով թիւրքաց թաղին մէջ, հայ կանանց և աղջկանց երթելու մինչեւ թրքաց սահմանները վտանգէ գետն չէր: Անտեղի պատահականութեանց առջեւը առնելու և հայ կնոջ պատիւը պաշտպանելու մտօք, օրուան առաջնորդ էմմանուէլ Վարդապետի նախաձեռնութեամբ որոշուեցաւ հայոց թաղի կեդրոնում կառուցանել մի առանձին շէնք: Բաղնիքի մը կառուցումը անհատի մը նիւթական կարողութենէն վեր լինելով, որոշուեցաւ փայաբաժիններով շինել զայն: Երկու հազար ոսկիի գումար մը բաւարար նկատուելով, փայաբաժիններու վաճառումը շուտով կատարուեցաւ թէփու, բայց մինչև շինութեան լրացումը իւրաքանչիւր փայաբաժին գինը բարձրացաւ եօթանասուն ոսկիի և բաղնիքը արժեք ւաւելի քան 35000 ռուբլի: Փայաբաժիններէն բաւական մաս մը գնեցին թէ եկեղեցիները և թէ վարժարանները, ւաւելցնելով անոնց վրայ բարեւեր ազգայիններու ինքնական նուէր տուածները, կարճ ժամանակի մը մէջ բաղնիքը կէսն ւաւելի սեփականութիւնը դարձաւ ազգային հաստատութիւններու: Ներկային մէջ, երբ մնացեալ բոլոր փայաբաժնետէրեր դժբախտաբար դադրած են շնչելէ, այս շէնքը կրնայ համարուել ազգապատկան: Երզնկայի գրաւման առաջին օրերը որքան որ թիւրք մը ուզած էր շահագործել զայն, բայց շնորհիւ Մոսկուայի Հայկական Կոմիտէի ջանքերուն ճշտուած է անոր ազգապատկան հանգամանքը: Աւերուած ջրի ծամբաները վերանորոգելէ և հարկ եղած ծառայողները ճարելէ վերջ մոյն Կոմիտէտը տրամադրելի ըրած է բաղնիքը թէ զինուորականներու և թէ ընդհանուր գաղթականներու պէտքին:

Եկեղեցիները առհասարակ և վարժարաններէն մի քանիսը ունեն իրենց անւան կտակուած խանութներ շուկայում, որոնք ներկայիս որքան որ ւաւերակներու կոյտ մը կը ներկայացնեն, բայց հողի իրաւունքը կը մնայ միշտ: Եկեղեցապատկան բոլոր տները շինուած են հայոց թաղին մէջ, բոլորն ալ կիսաւեր վիճակի մէջ են և շատ քիչերը բնակելի:

**Ազգային գերեզմանատունը:** Հայոց թաղի արեւմտեան ծայրը և քաղաքէն դուրս շատ ընդարձակ գետնի մը վրայ շինուած է գերեզմանա-

<sup>8</sup> Նկատի ունի երիտօրրքերի կողմից սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահընկեցութեանից հետո սամանյան Թուրքիայում 1876թ. սահմանադրութեան վերականգնումը:

տունը, որը սեփական է բոլոր եկեղեցիներուն և նրանց մէջ տնկուած բարդի և ուռնու ծառերու ճիւղերը կապահովէին անցելոյն մէջ, կիսով չափ, բոլոր վարժարաններու և Ազգային Առաջնորդարանի տարեկան վառելափայտը: Հայերու տեղահանութենէն առաջ և հալածանքներու սկզբուն թիւրք բարբարոս կառավարութիւնը, հայ երիտասարդներու ձեռամբ քանդել տուած է, իրենց նախածեռնութեամբ [18]95-ի<sup>9</sup> նահատակներու յիշատակին կանգնեցնել տրուած դամբարանը և յուշարձանը և նոյն այդ երիտասարդներու կռնակով քարերը փոխարել տուած է թրքական թաղ, ուր անոնք իբր հիմք ծառայած են թրքական գանարելան և բոլոր ոճրագործութեանց դարբնոցը եղող «Իթթիհատի»<sup>10</sup> նորակառույց շէնքին: Բոլոր տապանաքարերը քանդուած ու Եփրատը նետուած են, ծառերը կտրտուած և անհետացուած ըլլալով ներկային մէջ այդ գերեզմանատունը առած է ընդարձակ դաշտի մը երևոյթը ուր պատահամբ թողուած երկու առանց տապանագրի գերեզմանաքարեր միակ վկաներ ըլլալ կը թուին մօտաւոր անցեալի մը մէջ գործուած ճիւղային արարքներու:

**Վանքեր:** Երզնկան ունի հետևեալ վանքերը՝ Ա. Կիրակոս, Ս. Նեստե հայրապետ, Ս. Գեորգ, Չարչարանց Ա. Լուսաւորիչ, Ս. Նիկողայոս, Ա. Թորոս՝ անուանեալն Սըրխլի, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Կարապետ (Միաւոր), Շողակաթ Ս. Աստուածածին, Ս. Յակոբ (Կայիփոսի), Աւագ-վանք եւ Ա. Լուսաւորիչ Մեծ:

Այս վերջին երկու վանքերը վիճակաւ ենթակայ են Կամախ գաւառակին և Ա. Թորոսը՝ Դերձանին (Մամա-Խաթուն):

Եկեղեցի դաշտը շրջապատող գեղեցիկ լեռներու կողքին շինուած այս պատմական վանքերը, որոնցմէ իւրաքանչիւրը մէկ մէկ յուշարձաններ են և անխօս վկաները հայուն դարաւոր գոյութեան, ներկային մէջ իրենց վրայ կրած են թուրք վանդալիզմի հարուածները: [18]96-ի դժբախտ դէպքերէն վերջ այս երկրորդ անգամն է, որ մեր վանքերը կը վերածուեն աւերակներու: Չարչարանց Լուսաւորիչ վանքն է միայն, որ կիսաւեր վիճակի մէջ է, ուր այժմ հսկում է քիւրդ ընտանիք մը, այս այն միւսնոյն ընտանիքն է, որ հակառակ ազգին գանգատներուն, օգտուելով տիրող անիշխանութենէն և թիւրք կառավարութեան թոյլատու ընթացքէն, տեղաւորուած էր վանքն հողերուն մէջ իւրացնելով անկից մաս մը: Իւր

օրսօտրեական տեղաւորումը մինչև վանքի շէնքին յարակից հողերը, տեղի տուաւ լուրջ բողոքներու, բայց քիւրդը քաջալերուած կառավարութենէն, անդրդուելի մնաց իր տեղը: Այժմ օգտուելով տիրող հանգամանքներէն համարձակած է ներս սպրդիլ մինչև վանքը և գուցէ վաղը դժուար լինի զինքը դուրս ձգել անկից: Աւելորդ չլինէր յիշել, որ բոլոր վերոյիշեալ վանքերը, իրենց յարակից վարելահողերով թիւրք կառավարութեան կողմէ ճանչցուած են իբրև ազգապատկան տրուելով այդ մասին հարկ եղած վանքաթղթերը, վանքերը գուրկ լինելով վանահայրերէ, անոնց խնամակալութիւնը Ազգային Առաջնորդարանի կողմէ յանձնուած է աշխարհիկ մարդոց: Այսպէս անուանած, վանապետերն յանձնառու են տարեկան որոշ տուրք մը վճարել Տնտեսական խորհրդին և ապա պարտական են վերանորոգութեան բոլոր ծախսերը հոգալ և ազատ թողլով վանքերը՝ հոն այցելել փափագող բոլոր ազգայիններու: Վանքերը իրենց սահմանակից հողերէն գատ, շատ մը հեռաւոր կամ մօտակայ գիւղերու մէջ ալ ունեն ազգայիններու կողմէ կտակուած վարելահողեր, որոնց մշակութեան իրաւունքը ևս վերապահուած է կապալառու վանապետներու:

Ստացուած տեղեկութեան համաձայն բոլոր վանքերու վանապետներէն ազատուածներ կան, որոնց գոյութեան կարևորութիւնը պիտի անդրադառնանք քիչ յետոյ:

Ներկայացնելով Հայ[ոց] Գիւղատնտեսական Ընկերութեանը Երզնկայի արդի վիճակը թոյլ կուտանք մեզ կարգ մը միջոցներ առաջարկել, որոնց գործադրութիւնը և ապա կարելի պիտի լինի այժմէն ապահովել ազգապատկան կալուածներու և հաստատութեանց իրաւունքը ապագայ անակնկալներու դէմ:

Երզնկան սահմանակից լինելով Տերսիմին, շրջակայ քաղաքներէ և գիւղերէ հոն ապաստանածները բնական էր, որ այդ քաղաքով պիտի անցնէին դէպի ապահով վայրեր: Իրականութիւնը եկաւ հաստատելու այդ բանը, բայց ցաւալի է լսել թէ ց'արդ Վանի և տարբեր հայաշատ կեդրոններու մէջ գոյութիւն ունեցող և մրցման մէջ զիրար գերազանցող գաղթականական մարմիններն նոյն եռանդը ցոյց չտուին հոն: Եթէ չլինէր Մոսկուայի Հայկական կոմիտէտը, այդ հայրենագուրկ դժբաղդները գուցէ շատ զղջացած լինէին իրենց ապաստարանները թողած լինելուն համար: Տիրող համայնական թշուառութեան համ-

<sup>9</sup> Նկատի ունի 1890-ական թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից իրականացված արևմտահայության զանգվածային կոտորածները, որոնք շարունակվեցին մինչև 1896 թ.: Հարդերին զոհ են գնում մոտ 300 հազար հայեր: Թալանվում և ավերվում է հայ բնակչության գույքը: 1895 թ. հոկտեմբերի 7-ին Երզնկայում սպանվեցին 100-ից ավելի հայեր:

<sup>10</sup> «Իթթիհատ»՝ «Միություն և առաջադիմություն» (İttihat ve terakki) երիտթուրքական կուսակցությունը հիմնվել է 1889թ.: 1908թ. երիտթուրքերը գահընկեց են արել սուլթան Աբդուլ Համիդ II-ին և հռչակել սահմանադրության վերականգնումը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914-1918թթ. երիտթուրքերը ծրագրել և իրականացրել են օսմանահայատակ հայերի ցեղասպանությունը, որին զոհ են գնացել 1,5 միլիոն հայեր: 1919-1920թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած դատավարության ժամանակ երիտթուրքերի պարագլուխները հեռակա կարգով դատապարտվել են մահապատի:

դէպ յիշեալ Կոմիտէն բնական էր, որ իր կարելիին միայն պիտի ընէր: Յետեւաբար նկատելով, որ ոչնչով չէ կարելի բացատրել այս երկու չափ և երկու կշռի գոյութիւնը, կ'առաջարկենք հրաւիրել տարբեր գաղթականական մարմիններ վերցնելու իրենց բաժինը և կամ նիւթապէս օգնելու այդ Կոմիտէին կատարելապէս ի կատար ածելու իր վրայ ծանրացած նուիրական այս պարտքը:

Բուն Երզնկայէն ազատուածներու թիւը տարաբաղդաբար շատ սահմանափակ լինելով, անոնց հասցնելիք օգնութեան գործն ալ հետեւաբար շատ աննշան պիտի լինի: Կը մնայ միայն ուշադրութիւն դարձնել Խարբերդ, Ակն, Արաբկիր, Չնշկածագ և Չարսանճաք քաղաքներէն ազատուած եւ Տերսիմի վրայով Երզնկա հասածներու խնամքի գործին, որոնց մասին եւս մտածելը դժուար չպիտի լինի Ձեզ համար:

Ինչպէս ցոյց տրուեցաւ վերևի վիճակագրով, բուն քաղաքում կան ազգային շատ մը հաստատութիւններ և կալուածներ, որոնց գոյութիւնը ապահովելու հարցը կ'արժէ, որ առարկան դառնայ Պատվարժանի Ընկերութեանը լուրջ նկատմանը:

Հետևաբար կառաջարկենք հարկ եղած պաշտօնական թոյլտուութիւնը ձեռք բերել, կազմելու համար տեղւոյն մէջ Տեղական Մարմին մը, բաղկացած տեղացիներէ և տեղւոյն վրայ գործող գաղթականական մարմիններու մէկ մէկ ներկայացուցիչներէ, որոնց գործը պիտի լինի վարել բոլոր ազգային բնոյթ ունեցող գործերը գլխաւորապէս հետևեալ ուղղութեամբ:

1. Պատրաստել եկեղեցապատկան և վանքապատկան բոլոր կալուածներու և հաստատութեանց ցուցակը և տեղական իշխանութեան կողմէ հաստատել տալ առ ի նախատեսութիւն ապագայ հաւանականութեանց:
2. Հսկել և պաշտպանել, որ չքանդուին հայերու տները և Ազգային հաստատութիւնները ու կալուածները:
3. Հաւաքել իր մօտ ցրիւ եկած շատ մը եկեղեցական սպասներ, զգեստներ, գրքեր և այլն ի հարկին գնել գ'անոնք մասնաւորներու ձեռքէ:
4. Պաշտօնական յարաբերութեան մէջ մտնելով տեղական իշխանութեանց հետ հարկ եղած թոյլտուութիւնը ձեռք բերել թիւրքերու մօտ ց'արդ պահուած կիներ, աղջիկներ և մանավանդ փոքր երեխաներ դուրս բերելու համար (ց'արդ ի գործ դրուած անպաշտօն միջոցներ ոչ միայն բաւարար արդիւնք մը չեն տուած, այլ ընդհակառակը՝ պատճառ եղած են շատ մ'անխորժութեանց, երևան բերելով զինուորական իշխանութեան բացարձակօրէն անբարեհաճ վերաբերումը հայոց այս շատ արդարացի պահանջման համդէպ):
5. Մշտական յարաբերութիւն պահել Միութեանս հետ ի հարկին օգտուելու համար անոր նիւթական միջոցներէն յօգուտ հայրենիքի վերաշինութեան:

6. Ի մի հաւաքել և տեղւոյն վրայ խնամել ց'արդ գտնուած և զանազան կողմեր ցրուած որբերը և հետզհետէ գտնուելիքները բուն Երզնկայի մէջ խնամել յատկացնելով անոնց ազգապատկան շէնքերէն մէկը կամ երկուքը իբր դպրոց-որբանոց:

Կազմուելիք Տեղական Մարմնոյն գործունեութեանց սահմանը համառօտակի ճշտելէ վերջ, կարելի է այժմ անդրադառնալ վանքապատկան կալուածոց պաշտպանութեան խնդրոյն: Օգտուելով վանապետերու կենդանութենէն, կարելի է զանոնք կրկին հրաւիրել բնակելու լքուած վանքերու մէջ, յանձնելով անոնց բոլոր հին իրաւունքները:

Երեկի հարուստ վանապետը ներկային զրկուած ըլլալով նիւթական բոլոր միջոցներէն, անկից չի կարելի սպասել, որ սեփական միջոցներով վերաշինէ աներուած վանքը և իր տնտեսականը: Հետեւաբար պիտի առաջարկենք Պատվարժանի Ընկերութեանը հետևեալ միջոցները, որոնց կիրառումը ոչ միայն օգտակար պիտի լինի նիւթական տեսակետով, քանի մ'ընտանիքներու, այլև պիտի ապահովէ վանքապատկան կալուածները ապագայ ծագելիք պատահականութեանց առջև:

1. Կազմել վանքախնամ յանձնախումբ մը Տեղական Կոմիտէին կից:
2. Իւրաքանչիւր վանքի մէջ վերաշինել 1-2 սենեակներ վանապետերու բնակութեան յատուկ, այտու մը, կամ գոմ մը ընտանի կենդանիներու համար:
3. Տալ իւրաքանչիւր վանապետի (մայած վարելահողի տարածութեան) 1-2 լուծք եզ և քանի մը ոչխար կամ այծ սնունդի համար:
4. Տալ իւրաքանչիւր բաւարար սերմնացու գարնա(նա)ցանի համար:

Նոյն երկրի ծնունդ և նոյն ժողովրդի ծոցում ապրած ըլլալով հպարտութեամբ պիտի յիշենք հոս, որ ի սկզբանէ անտի իր իսկ իւրով տապալուած և արտաքին օգնութեան յիշխասող Երզնկացիներ, որուն տնտեսական վիճակը և կուլտուրան միշտ բարձր եղած է համեմատած իր հարեւան գաւառներուն, այժմ դժուար պիտի լինի ձեռք պարզել հանրութեան նպաստին: Մէկ կողմէն էր ինքնասիրութիւնը չ'շոշափելու և միւս կողմէն իր մէջ չ'նեղցնելու համար այն ձեռներից ոգին, որով ապրած է, կ'առաջարկենք փոխատւութեան անուան տակ տալ թէ՛ գիւղացիին և թէ՛ վանապետերին տրուելիք որևէ գումար կամ օգնութիւն:

Հայաստանի Վերաշինութեան և Գիւղատնտեսական Ընկերութեան Յանձնաժողովներու լուրջ նկատառմանը ենթարկելով ներկայ հարցը, կը սիրենք յուսալ, թէ անոնք այժմէն իսկ պիտի ձեռնարկեն ազգաշէն այս գործին, ճշտելով իրարու հանդէպ ունենալիք փոխադարձ պարտականութիւններ և այս մասին տրուելիք ուղղութիւնը:

Դժբաղդաբար Երզնկայեն ազատուածներու թիւը շատ ցանցառ լինելով, անոնց հասցնելիք օգնութիւնն ալ չըպիտի կարօտի այն մեծամեծ գումարներուն, որոնք ց'արդ ի սպաս դրուեցան Յայաստանի տարբեր վայրերու վերաշինութեան:

Ստացուած հաւաստի տեղեկութեանց յենւելով, վստահ ենք, որ տեղւոյն վրայ կարելի պիտի լինի ճարել սերմնացու, իսկ լծկանները և կթաները սահմանակից Տերսիմեն, հետևաբար, որոքան շուտ, այնքան օգտակար, զուցէ վաղը ուշ լինի ապահովել նպատակը:

Այսպիսով, անգամ մը ապահովելէ վերջ վանքերու վերաշինութեան և վերամշակումի գործը, կ'առաջարկենք պահանջել իւրաքանչիւր վանապետէ իրենց ձեռք բերած արդիւնէն որոշ տոկոս մը յատկացնել ի հաշիւ փոխառութեան և բաժին մը յանձնելու գաղթականներ խնամող մարմիններէ մէկին իրենց կարգին յատկացնելու համար աշխատող ձեռքերէ և վարելահողէ զուրկ գաղթականներու տարեկան ապրուստի մէկ մասին, մինչեւ իր որոշ պարտքին հատուցումը:

Քաղցր է մեզ յուսալ, որ Պատվարժան] Ընկերութիւնդ պիտի հաճի լաւագոյն ընդունելութեամբ մը պատուել ներկայս, որ տկար մէկ արծագանքն է թշուառութեան բաժակը ց'մրուր քանած, երէկ լաւագոյն պայմաններու տակ ապրող, իսկ ներկային մէջ աւերակներու վրայ իր սև բախտը կոծող հատուածի մը աղաղակներուն և, որը սակայն աչքերը միշտ յառած դէպի իր մեծ եղբայրը իրաւամբ անկից կսպասէ ստանալ իր վերակենդանութիւնը ապահովող կենսատու բաժակը:

Երզնկացիներու Միութիւն

ի դիմաց Վարչութեան

Նախագահ՝ Սիանճեան [ստորագրութիւն]

Քարտուղար Ազատ Մանուկեան [ստորագրութիւն]  
[կնիք. «Երզնկացիներու Միութիւն. Թիֆլիս-1916»]

ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, ք. 19-20: Բնագիր: Մեքենագիր: